ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ 1

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: Սկսած 2019 թվականից իրականացվել են աշխատանքներ ապահովագրական ծածկույթի գնահատման, հիմնական ծառայությունների փաթեթի որոշման, համակարգում ըստ բնակչության առանձին խմբերի ծախսերի որոշման ուղղությամբ: 2019 թվականին հանրային քննարկման է ներկայացվել ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառվել է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2024թ-ից, իսկ 2023 թվականը համարվում է ԱՀԱ ներդրման նախապատրաստման տարի, որի ընթացքում պետք է իրականացվեն առողջապահական համակարգի պատրաստվածության գնահատում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԱՀԱ փուլային ներդրմանը պատրաստ լինելու նպատակով, Առողջապահության նախարարությանն անհրաժեշտ է առողջապահության տնտեսագիտության խորհրդատվության իրականացում համապատասխան մասնագետի ներգրավմամբ՝ առողջապահական համակարգի պատրաստվածության և բնակչության կարիքների գիտական հետազոտությունների և գնահատումների իրականացման նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության Համապարփակ Ապահովագրության ներդրման հետ կապված առողջապահության ծառայությունների գնահատման հարցերով խորհրդատվության տրամադրում, այդ թվում

1. Ըստ հիվանդությունների ախտորոշումների Հայաստանում ծառայությունների մատուցման տվյալների հավաքագրում, վերլուծություն և գնահատում:
2. Բնակչության առողջական կարիքների գնահատում ըստ հիմնական տարածված հիվանդությունների աշխարհագրության, տարածաշրջանների:
3. Գիտական և ապացուցահեն տվյալների վերհանում հիմնական հիվանդությունների դեպքում անհրաժեշտ ծառայությունների մատուցման

ծավալների գնահատման նպատակով՝ օգտվելով նաև միջազգային հասանելի համեմատականներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետի աշխատանքից ակնկալվում է ստանալ հետևյալ արդյունքները;

1. Ըստ հիվանդությունների ախտորոշումների Հայաստանում ծառայությունների մատուցման տվյալների բազաներ և վերլուծական աղյուսակներ:
2. Հիմնական տարածված հիվանդությունների տվյալների աղյուսակներ ըստ Հայաստնաի տարածաշրջանների:
3. Համապատասխան աղյուսակներ ծառայությունների մատուցման վերաբերյալ՝ ըստ ախտորոշումների:

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետը, ըստ անհրաժեշտության, առողջապահության ֆինանսավորման խորհրդատուի/թիմի ղեկավարի կողմից կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է մասնակցի սույն աշխատանքի նկարագրով պայմանավորված պրեզենտացիա/ների կազմմանը, նկարագրելով առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները:

ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Առնվազն բարձրագույն բժշկական կրթություն,
- Առնվազն 15 տարվա փորձառություն առողջապահության բարեփոխումների, այդ թվում առողջապահական ծառայությունների փոփոխություններին
- առողջապահության տեղեկատվական համակարգերի հետ աշխատանքի առնվազն 15 տարվա փորձառություն
- Առնվազն 15 տարվա փորձ բժշկական կազմակերպությունների հետ աշխատանքի, այդ թվում բժշկական կազմակերպություններում ֆինանսական կառավարման փորձառություն

- Տվյալների վերլուծություններ իրականացնելու հատուկ փորձ՝ տվյալների բազաների կառուցման, ձևաչափերի մշակման, տվյալների համադրումներ իրականացնելու պրակտիկ և վարժ ունակություններ
- Հայերենի և Ռուսերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, օրենքների, ենթաօրենսդրական փաստաթղթերի վերաբերյալ ստացված կարծիքների ամփոփման, դրանց մշակման, մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: